№ 33 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1894 № 33

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուան 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի նոր կանոնադրութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ռաշտից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—Բանասիրական. Փայտակարան կամ Ղարադաղ գաւառը.—Յայտարարութիւններ:

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

„Մշակ“ լրագիրը խօսելով այն կանոնադրութեան մասին, որ Թէհրանի Ազգային Ուսումնասիրաց ընկերութիւնը դիմելով Վեհափառ Կաթուղիկոսին խնդրել էր պարսկահայերի հաստատութեանց համար, հետեւեալ արդարացի դիտողութիւնն է անում:

„Ամեն մի կանոնադրութիւն կարող է արմատ ունենալ մի ժողովրդի մէջ միայն այն ժամանակ, երբ իւր աղբիւրը վերցուցել է առել նոյն այդ ժողովրդից, երբ այդ կանոնադրութիւնը արդիւնք է այն պայմանների ուսումնասիրութեան, որոնց մէջ գտնւում է այդ ժողովուրդը, և կարող է դեռ չը գործադրուած ցամաքել, եթէ նա արդիւնք է կաբինէտային աշխատանքի“:

„Մշակի“ յայտնած այդ գաղափարը թէ կանոնադրութիւնն պէտք է տեղական պայմանների լուրջ նկատառութեան արդիւնք լինի, վերին աստիճանի ճիշդ է, միայն թէ „Մշակը“ սխալւում է այն բանի մէջ որ կարծում է թէ „Շաւիղը“ սպասում է որ այդ բոլորը խմբագրուի Էջմիածնի մէջ, առանց երբէք նկատողութեան առնելու տեղացիների ձայնը:

Ի հարկէ այդ կանոնադրութիւնը վերջ ի վերջոյ խմբագրուելու է Էջմիածնի մէջ, բայց երբ արդէն խնդիրը նախապէս լուսաբանուած լինի. երբ արդէն Պարսկաստանի զանազան կողմերից այդ կանոնադրութեանց նախագիծներ ներկայացուած կը լինին: Խօսելով կրթական հարցի մասին, որ այդ կանոնադրութեան մէջ ամենալայն տեղն է բռնելու, „Շաւիղը“ յայտնած է իւր № 19-ի մէջ հետեւեալ գաղափարը:

„Մենք չենք կարող անփոփոխ կերպով ընդունել ռուսահայ ուսումնարանների ծրագիրը. տեղական հանգամանքներ կան ի նկատի առնելու: Այնու ամենայնիւ քիչ փոփոխութեամբ այդ ծրագիրը պէտք է յարմարեցնել մեր ուսումնարաններին: Այս ծրագրի կազմութիւնը Վեհափառ Կաթուղիկոսը կարող էր յանձնել Ուսումնական Յանձնաժողովին, որը դիմելով բոլոր պարսկահայ ուսումնարաններին՝ կարող էր պահանջել նորանցից ծրագրի նախագիծներ. այդ նախագիծների մէջ արդէն նկատելի կը լինէին տեղական հանգամանքների պահանջած փոփոխումները, որից յետոյ ուսումնական Յանձնաժողովը կարող էր գծել մեզ համար միօրինակ ծրագիր և ենթարկել Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեանը“:

„Մշակի“ յարգելի խմբագրութիւնը կարող է նկատել այդ տողերից որ մենք հեռու էինք պահանջելուց՝ որ այդ բոլորը խմբագրուի Էջմիածնում, մի խուցի չորս պատերի մէջ. բայց, նկատելով այն հանգամանքը որ կարող են միմեանցից անհունապէս տարբերուող նախագիծներ ներկայացուիլ, "Շաւիղը“ մտածում է որ վերջնական խմբագրութիւնը պէտք է կատարուի Էջմիածնում, մի ձեռնհաս Յանձնաժողովի ձեռքով:

Արդ՝ „Մշակը“ հետեւեալ կարծիքն է յայտնում այդ կանոնադրութեան խմբագրութեան մասին:

„Մեր կարծիքով ամենագործնական միջոցն է՝ առաջարկել պարսկահայերի երկու թեմական առաջնորդներին, որ նորանք հայ ազգաբնակութեան պատգամաւորների և ներկայացուցիչների մասնակցութեամբ մի յանձնաժողով կազմեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԴԱՂ

—

(Շարունակութիւն 28-րդ թուից)

Խանդպարը երեք կողմից շրջապատուած է ապառաժներով, որոնց իւրաքանչիւրի միջով մի մի անցք կայ, իսկ հարաւային կողմիցը անցնում է մի գետակ խոր ձորի միջով, որից անցնելով պէտք է բարձրանաս դիւղը. Խանդպարը իւր այս դիրքով մի քարաբերդի է նմանում: Այս անմատչելի դիւղը նշանաւոր անցեալ է ունեցած: Ծերերի պատմելով Փայտակարանի ժայռաբնակ հերոսները այդ Կիրճերի մէջ օսմանցւոց եւ հին խաների շատ զբրքերն են ջարդած Դրանց մելիքների առաջնորդութեամբ, որոց մէջ նշանաւոր տեղ են բռնել, Մելիք Ազարիայի որդին Քառ-Երէցը: Սա մի քահանայ է եղել, որի անունը անյայտ է, միայն ականջները խուլ լինելով կոչուած է եղել Քառ-երէց, իսկ իւր քաջութեամբ ժառանգել է Աղամխոռ քէշիշ (մարդակերքահանայ) անունը: Սրանից յետոյ քաջութեամբ նշանաւոր էր, իւր Թոռն Մէլիք Ազարիայ բ.: Սորան յաջորդում է եղբօր որդին Մելիք Բարան, որ այնքան խելօք է եղել, որ այժմ էլ ղարադաղցիք խելօք խօսողին ասում են „Մելիք Բարայի է խօսում“:

Տիզմառ գաւառակի իշխանութիւնը վերաբերում էր այս մելիքներին, որոնք ունէին եւ շատ սեպհական կալուածներ ու գիւղեր, սակայն Մելիք Բարայի մահուամբ կորչում է թէ իշխանութիւնը եւ թէ կալուածները: Այս ցեղը այժմ էլ կոչւում է Քառ-երէցեանք: Խանդպարի մեծամասնութիւնը այս ցեղից է, մի քանիսն էլ դուրս են եկել եւ ուրիշ բաղաքներ են գնացել, որոց մէջ նշանաւոր է Թիֆլիսում Ալէքսանդր Մելիք Ազարեանցը:

Խանդպարը ունի 100 տուն, Ղարադաղի ամենանշանաւոր դիւղն է, թէ հնութեամբ, թէ մեծութեամբ, թէ կրթութեամբ եւ թէ ուրիշ կողմերով:

Ունին մի քարաշէն եկեղեցի, որ բաւականաչափ լաւ եւ աւելի կոկիկ է քան թէ միւսները, ունի վերնատուն յատուկ կանանց համար: Սեղանը, մը-կրտութեան աւազանը լաւ կարգին են: Եկեղեցու մօտ շինուած է մի վարժարան, Խանդպարը ի նախնուց Ղարադաղի կրթարանն է եղած. այստեղ միշտ վարժատուն կը լինէր եւ ամեն դիւղերից հայ մանուկները այստեղ դալով կուսանէին եւ տիրացուներ կը պատրաստուէին միւս դիւղերի համար:

Վերջին տարիներս Կովկասից մի ուսուցիչ էին բերած այս դիւղը, որը մանուկներին ուսուցանում էր նոր ձեւով. դասագրքերը այլ եւս սաղմոս ու ժամագիրք չէին: Չորս տարի ուսուցիչը մնալուց յետոյ, թողեց Խանդպարը ու գնաց. դիւղացիք ուսուցիչ ճարել չը կարողանալով՝ 2 տարի մնացին առանց ուսուցչի. այժմ դերապատիւ Սուրիաս սրբազանը մի ուսուցիչ է ուղարկած Խանդպար:

Խանդպարից գնացի Ղուլիդի, որ երեք ժամուայ ճանապարհ է: Ղուլիդին ընկած է մայր Երասխի հովտում, մի փոքրիկ ձորակի մէջ, երեք կողմից բարձրացած են լեռներ իսկ մի կողմից Երասխի լայն հովիտն է:

որին և յանձնեն նոր կանոնագրութեան խմբագրութիւնը և մշակումը և ապա այն կանոնագրութիւնը առաջարկեն Էջմիածնի Հոգևոր իշխանութեան հաստատութեան։"

Այս ձևի որչափ գործնական և գործադրելի լինելու մասին՝ մենք յաջորդ թուով կը խօսինք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՌՈՇՏԻՑ

22 օգոստոսի 1894

Լոյս ուրբաթ գիշեր ամսոյս 19-ին շնորհունակ Սահակ վարդապետ Այվատեանը ժամանեց Ռաշտ։

Վարդապետի գալը մեծ ուրախութիւն պատճառեց ռաշտեցիներին, որոնք ներկայացան իրանց հոգևոր հովուին, հասնելուց մի քանի ժամ յետոյ, հայը սուրբը սիրալիր կերպով ընդունում էր բոլորին, առանձին առանձին հարցնելով իւրաքանչիւրի պարապմունքը, կցելով իւր հայրական խրատները։

Նա նոյնպէս, բարեհաճեց հետաքրքրուիլ տեղական ազգային գործերով, որը գտաւ բաւական ցաւալի դրութեան մէջ, մանաւանդ երկուռ դպրոցների հարցը։

Խնդիրը նորանում է որ այդ դպրոցը մի դասեան դպրոց լինելով ոչ մի արդիւնք չէ տուել մինչև այսօր և չէ կարող տալ եթէ այդ դրութեան մէջ մնայ նոյն իսկ տասնեակ տարիներ, և այդ էր որ հրաւիրեց հայը սուրբի ուշադրութիւնը։

„Ի՞նչ նշանակութիւն ունի, ասում էր հայը սուրբը, որ ռաշտեցիք տարեկան 600 թուման ծախսում են, և ոչ մի օգուտ չեն քաղում, մի դասեան դպրոցը չէ կարող աշակերտներ պատրաստել, նոյն իսկ տեղական կեանքի հանգամանքներին պիտանի լինելու համար, բայց եթէ այդ 600 թումանի վերայ նոյնքան էլ աւելացնէք, այն ժամանակ, ձեր դպրոցը կունենայ աւելի դասարաններ, որով կը պատրաստուի նոր զարգացած սերունդ։

Մի քանիսը, աւելացրեց հայը սուրբը, իրանց որդիքը ուղարկում են Եւրոպայ կամ Ռուսաստան բարձր կրթութիւն առնելու և տարեկան առնուազը 500 ռուբլի ծախսում են ամեն մէկի վերայ, միթէ լաւ չէր լինի որ իրանց քաղաքի դպրոցին նորա կէսը կամ քառորդը տային որ թէ իրանց որդին կուսանի, և թէ դպրոցը կը բարեկարգուի, և իրանց արիւնակից չքաւոր եղբայրների որդիները կը սովորեն։"

Հայը սուրբը երկար ու բարակ բացատրեց, դպրոցի անհրաժեշտութիւնը և թէ խրատում էր որ անմիջապէս այդ խնդիրը ռաշտեցիների մտածելու առարկան լինի։

Ներկաներից փափագ արտայայտուեց որ հայը սուրբը ինքը բարեհաճէ մնալ Ռաշտ մի ժամանակ և իւր ներկայութեան ժամանակ կարգադրել այդ խնդիրները։

Հայը սուրբը ցաւելով յայտնեց, որ իւր ներկայութիւնը թեմում օր աւուր սպասում է հետևաբար դժուար է իւր գնալը յետաձգել, մանաւանդ որ ինքը դեռ ևս իւր պաշտօնը չէ ստանձնել։

Վերջապէս ներկայ եղողների ստիպմամբ վարդապետը զիջանեց մի քանի օր մնալ։

Վարդապետը մտադիր է գլխաւորապէս դպրոցի խնդիրը ուշադրութեան առնել, և ենթարկել մի քանի բարեփոխումների. միայն ոչ պաշտօնապէս։

Ժողովը այսօր պէտք է կայանայ թէ ինչ արդիւնք կունենայ իւր ժամանակին կը հաղորդեմ։

Հայը սուրբը կիրակի օրը ամսոյս 21-ին եկեղեցում մի ազդու քարոզ խօսեց, եկեղեցում գտնուող փոքրաթիւ ժողովուրդը լսում էր ամենայն համակրութեամբ։

Joseph

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռաշտ 18 օգոստոսի 1894

Յ՚օգուտ Ռաշտի օրիորդական դպրոցի վարչութեան ձեռնարկած վիճակախաղի, զանազան տոմսատէրերը դիմում են մեզ հարցնելով, թէ երբ կը ձգուի վիճակախաղը։

Անկարելի լինելով մեզ, առանձին առանձին պատասխանել բոլորին, վարչութիւնը խնդրում է, յարգելի խմբագրութիւնից, որ թոյլ տաք ձեր պատուական լրագրի միջոցաւ յայտնել, թէ Ռաշտի և թէ օտար քաղաքներում գտնուող տոմսատէրերին, որ վիճակախաղի ժամանակը, անորոշ է, քանի որ տոմսակների համարեայ մէկ երրորդը մնում է դեռ անվճառ։

Վիճակախաղը ձգուելուց յետոյ, „Շաւիղի" միջոցաւ կը յայտարարուի։

Վարչութիւն Ռաշտի Ընթերցասիրաց ընկերութեան պաշտօնակատար նախագահ՝ Ա. Յովսէփեան

Գանձապահ՝ Առաքել Մարգարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի, օգոստոս 29, գերապատիւ Սահակ ծայրագոյն վարդապետ Այվատեան, Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի փոխանորդը, ժամանեց Թէհրան։ Ընկերանում էին բաւական թուով հայեր, որոնք դիմաւորել էին նորին գերապատուութեան։ Հայը սուրբը ուղղակի դիմեց ս. Գէորգ եկեղեցին, և աղօթելուց յետոյ, գնաց իւր համար պատրաստուած բնակարանը։

Գերապատիւ Սահակ ծայրագոյն վար-

Ղուլիղին ունի 20 տուն. բոլորովին անկիրթ. Տիզմառում այս ամենաանկիրթ գիւղն է թէ բնութեամբ. թէ կրթութեամբ եւ թէ այլ կողմերով։ Սոքա եւս ունին մի փայտէ անշուք եկեղեցի։

Այստեղից մայր Արաքսի ափերով ճանապարհուեցայ դէպի Շաւլի եւ երեք ժամումը հասայ այնտեղ։

Շաւլին էլ ընկած է մի սաստիկ խոր ձորի մէջ որի երեք կողմերը ժայռեր են իսկ մի կողմը խոր անդունդը։ Արեգակի ճառագայթները այստեղ հասնում են կէս օրին 2 ժամ մնացած եւ նոյնչափ էլ անցած անհետանում են եւ անմիջապէս տիրում է մութը։

Շատ դժուար է փողոցներով քայլելը եւ եթէ մէկի ոտքը յանկարծ սահի քարերի վերայ իսոր անդունդի մէջը պէտք է կանգնէ։

Այս գիւղը ունի 15 տուն որոնք պարապւում են երկրագործութեամբ. ունին եւ մի եկեղեցի, ուսումնարան ոչ։

Օրը ամպամած էր, երբ ես դուրս եկայ Շաւլինից։ Լեռան ստորոտից գագաթը պէտք է բարձրանայի, 3 վերստ տարածութիւնը հազիւ կարողացանք 3 ժամումը վերջացնել. ես երբէք քայլել չէի կարողանում, ուղեկիցս թեւից բռնելով՝ հազիւ կարողացայ առաջ գնալ, մարդու ոտքը սահելով գլորւում ու ցած էր գնում. մենք անպատմելի դժուարութեամբ լեռան գագաթը հասանք, որին ասում են „Ղարա-հոխրշ" (Սեւ լանջ). այստեղից երեւում է ամբողջ Տիզմառի գաւառակը. բայց Կասպից ծովից նրասին գետի վրայով մշուշը եկել պատել էր ամբողջ Ղարաղաղը. ամեն տեղ սեւացած էր եւ ոչ մի տեղ չէր երեւում. հէնց այս է պատճառը, որ Փայտակարանին ասում են Ղարաղաղ (Սեւ լեռ)։

Մենք հասանք նորաշէն։

Գիւղը հասնելուց մութը կոխել էր. սեւ երես մշուշը դեռ պատած էր ամբողջ Ղարաղաղը՝ եւ անծրեւում էր։

Կէս գիշերին անձրեւը կտրուեց. քամին բարձրացաւ եւ մշուշները քշելով անհետացրեց։

Նորաշէնը Տիզմառում ամենանշանաւոր տեղն է բռնում, իւր բարձր դիրքովը, օդ ու ջրովը։ Գիւղը ընկած է լեռան լանջի վերայ գտնուած փոքրիկ տափարակ տեղում. գիւղի միջից երեւում են հիանալի տեսարաններ, սարեր, ձորեր, դաշտեր, անտառներ, որոնք իրանց զարնանային բազմատեսակ ծաղիկներովը հիացնում են մարդուն, գիւղի մօտերից հոսում են սառն աղբիւրակներ, որոնցով ջրում են իրանց բուրաստանները։

Նորաշէնը ունի 35 տուն, որոնք պարապւում են նոյնպէս երկրագործութեամբ եւ պանդխտութեամբ ինչպէս միւս գիւղերը. այս գիւղի կալուածը պատկանում է Դավրէժի Արամեան դպրոցին։ 8 տարի առաջ այստեղ բնակւում էին լեռնական քրդեր, որոնք շատ նեղացնում էին խեղճ հայերին եւ ամենեւին արդիւնք ցոյց չէին տալիս։ Բայց այժմ շնորհիւ երջանկայիշատակ Մխիթարեան սրբազանին բոլոր թուրքերը դուրս են գնացած գիւղից եւ նոցա տեղ հայերը եկել բնակւում են։

Հանգուցեալ Ստեփանոս Մխիթարեան սրբազանը երբ Դավրէժ եկաւ, նորա առաջին գործն այդ եղաւ։

գապետ Ալվատեանը վաղը, կիւրակի, ս. Գէորգ եկեղեցու մէջ կարդալու է Հայրապետական կոնդակը և քարոզ է խօսելու։

—

Երեքշաբթի, ժամը 4-ին, Միրքովի անունով սերբիացի պաշտօնակալը որ ծառայած էր պարեկական բանակում, մի ամսուայ հիւանդութիւնից յետոյ մեռնում է։ Հանգուցեալի կինը, իւր մօտից հեռացնելով ծառային և ուրիշներին, անձնասպան է լինում մի ռեվոլվէր պարպելով իւր ականջի մէջ։

—

Սեպտեմբերի 1-ին Հայկազեան դարձարանը բացուեցաւ։

—

Մեզ գրում են Դավրէժից որ, „Ազգային ընկերութեան“ բաժանորդների թիւը մինչև օգոստոս 15-ը հասնում էր 10115-ի։ Ընկերութիւնը իւր վերջին ժողովումը վճռել է չոր մրրգերի առուտուր սկսել։

—

1894 թիւ յունվարի 1-ից մինչև յունիս 20՝ Դավրէժում ռուսաց հիւպատոսարանից դուրս է տրուած դէպի Ռուսաստան 13000 անցագիր, Ջուլֆայի, Աստարայի, Խուդա-Աֆերինի և Շահթախթի վրայով։

—

Դավրէժից մեզ գրում են հետևեալը։ Մեզ մօտ այս ամառ օդը անցաւ շատ զով, բայց վերջերս սկսել է մի քիչ տաք անել։ Ամեն տարուայ վերայ չը նայելով բերքերի առատութեան՝ այստեղի ամեն բան առանց բացառութեան՝ ոչնչ տոկոսով թանգացել է։ Հացի լիտրը արժէ 3 աբասի, մսի լիտրը 12 աբասի, իւղի լիտրը (կարագ) 11 դրան, փայտի խալիսարը (100 լիտր) 22 դրան. վաճառականները արդէն ոկսել են լովլայ (չոր ծիրան) առնել որի լիտրը արժէ 12 աբասի, իսկ թարմ նուշի լիտրը 11 դրան։ Բարաթը քանի գնում է թանգանում է՝ օգոստոս 13-ին պարսկական մէկ թումանը փոխում էին Ռուսական 1 ր. 94 կոպէկով։ Արծաթ դրամի սով է այժմ Դավրէժում, զառաքխանի մէկ ամիս փակ լինելու (մուհարեմի) պատճառով։

—

Դավրէժից մեզ գրում են, որ օգոստոս 20-ին Բերդաթաղի Ղալիբաղան փողոցում պարսիկ աւազակները բարձրանալով Յարութիւն Աղաբէգեանցի դան կտուրը, որը քնած է եղել իւր կնոջ հետ սպանել են և փախել։ Յարութիւն Աղաբէգեանը մի համեստ բնաւորութեան տէր մարդ էր և արհեստով խոհարար, ասում են որ սպանողները եկած են եղել՝ նախկին կենողին սպանելու, որի տեղափոխուելը աւազակներին յայտնի չէ եղել։ սպանողների ց մէկը արդէն ձեռբակալուած է, յոյս կայ որ միւսներն էլ շուտով ձեռբակալուին, Յարութիւնի կնոջ ասելով, աւազակները եղել են Հինգ հոգի, որոնցից միայն մէկն է բարձրացած եղել կտուրը։ Աւազակները տարել են միայն Յարութիւնի շորերը և ուրիշ ոչինչ։

—

Խոյից մեզ հաղորդում են հետևեալը։ Այս օրերումս վանեցի երեք մշակներ, որոնք գտնուում էին Բագու, վերադառնալիս երբ անցնում են Երասխը, վարձում են Գարազեատցի մի ձիապանի որ իրանց հասցնէ Սալմաստ, բայց ձիապանը փոխանակ Սալմաստ տանելու տանում է մի այլ գիւղ և իրանց ունեցած փողերի մի մասը աքնում ու բաց թողնում։ Իրանց ունեցածները ստիպուած իրանք շալակած կուզեն մի կերպ հասնել Սալմաստ, բայց կրկին մի քանի ձիաւորներ առաջները գուրս գալով կառնեն մնացած փողերը ու շորերը։ Այժմ եկած այստեղ գանգատել են իրանց հիւպատոսին, որը բերել տուել ու պահանջում է ձիապաններից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսի երկրաշարժից վնասներին նպաստելու համար սկսուել է թէ Թուրքիայում և թէ Եւրոպայում դրամական հանգանակութիւն և այդ առիթով կազմուել են նպաստող յանձնաժողովներ զանազան տեղերում։ Լօնդոնի լորդ-քաղաքապետը հանգանակել է 12,000 ռուբլի, սուլթանի նախագահութեան ներքոյ Պոլսում կազմուած յանձնաժողովը ժողովել է 1,786,359 ղուրուշ. այդ յանձնաժողովի համար յատուկ կանոնագիր է հրատարակուած և մինչև անգամ սուլթանը հաստատել է մի նոր շքադրամ „Համիյէթ վե էպնայի ճինսինէ մուավէնէթ“ (բարերարութիւն և իր համասեռին օգնութիւն) անունով և այդ շքադրամին ոսկի մէդալը պէտք է տրուի նպաստ տուող թագաւորներին և իշխանազուններին։ Զմիւռնիայի զգաստակութիւնը ժողովել է իր մէջ 10,000 ռուբլի, իսկ հարուստներից մի նը, պ. Նակէլմաքէրս նուիրել է 30,000 ռուբլի։ Յունաց պատրիարքը գրել է մի շրջաբերական բոլոր յունական թեմերին, որ հանգանակեն 50,000 ռուբլի Հայքի աստուածաբանական վարժարանը վերաշինելու համար։ Նուէրներ լինում են և մթերքներով։

—Մեզ հեռագրում են Երևանից, օգոստոսի 5-ից, „Պրոֆէսոր Արծրունին այսօր ուղեւորուում է դէպի Արարատը,

---

Դորանից յետոյ գնեց մօտակայ գիւղերը Օղա, Ձիւժ, Ռաշու եւ Զեակու, վերջինս անբնակ է։ Նա բոլորը պահեց իւր իշխանութեան ներքոյ, եւ այդ գիւղերը մինչև սրբազանի մահը խաղաղ եւ հանդարտ կեանք էին վայելում։ Բացի սորանցից միւս գիւղօրայքն էլ ազատեց Քուրք բէկերի նեղութիւններից եւ իւր կողմից կառավարիչներ նշանակեց, գլխաւորապէս հոգեւորականներից։ Հարեւան Քուրք գիւղերից շատերը տեսնելով հայոց խաղաղ վիճակը, նրանք եւս սրբազանին դիմեցին, որ իրանց էլ ազատէ բէկերի ձեռքից, սրբազանը ոտքանց եւս ձեռք կառկառեց եւ ոմանց իւր իշխանութեան տակ առաւ։ Այսպիսի շատ գործերով ս. Մխիթարեանը մեծ հռչակ էր ստացել Ղարադաղում, ինչպէս ուրիշ տեղեր, եւ նորան կոչում էին մեծ Խալիֆայ։ Նորա մի նամակը անբաղդ ղարադաղցու սրտին մխիթարութիւն էր տալիս։ Սովորութիւն էր դարձած, երբ սրբազանի նամակը կը գար (կարմիր գոյնով ներկուած) գիւղացիները կը կոչէին „Կէնա կրմզի փիչատ կեալտի, կիօրասան նավար իչինդայ։“

Սրբազանի մահից յետոյ Քուրք խաները դուրս էին բարձրացրած, հայոց իրաւունքները կորստեցնելու վերայ էին։ Ցուսով ենք որ ներկայ Մէրինաս սրբազանն էլ նոյն դիրքը պէտք է բռնէ Քուրք խաների դէմ։

Լոյսը բացուեց. ամպերը այլեւս չէին երեւում, արեւի ճառագայթները տարածում էին բնութեան արարածներին. ցօղը դեռ վեր չէր կացած, անձրեւից զոյացած ցեխի պատճառով գիւղացին ոչ արտը եւ ոչ էլ անտառը չէր կարող մտնել։ Այդ օրը բոլորը յանդուգն էին մնացել, բացի տաւարած ու խաշնարածներից, որոնք առաւօտեան շուտով կանգնած բարձր կտուրի վերայ զոռում էին. „դէ հա շուտ բեցէք. տաւարը կենցալն դուրս բեցէր եորը ընկալ“.

Տաւարածներն ու խաշնարածները դուրս ֆկան գիւղից։

Գիւղի վերի մասում մի տան առաջ կայ մի հրապարակ, որի մէջ տեղը կայ մի մեծ ուռենի ծառ. ծառի չորս կողմը շարած էին մեծ մեծ տափարակ բարեր, որոնք ծառայում են նստարանի տեղ մի եւ նոյն ծառի տակից բղխում է մի սառն աղբիւր։ Այս ծառը գիւղի քահանային էր պատկանում։

Մնացեալ գիւղացիք, ծեր ու երիտասարդ, հաւաքուել էին այս ծառի տակ եւ խօսում էին զանազան անցքերի վերայ։ Ծերերը գլխաւորապէս խօսում էին անցեալի վերայ եւ գովաբանում էին իրանց նախահարց քաջագործութիւնները, իսկ երիտասարդների խօսակցութիւնները առօրեայ նիւթերի վերայ էր։

Ամենատաք խօսակցութեան ժամանակ, քոխվէն (տանուտէրը) հարցրեց. „տէր հայրը չեկաւ“,—Ո՛չ, պատասխանեցին։ Նոյն րոպէին գիւղի մօտից դուրս երեւեցաւ մի կապոյտ ձիաւոր, ամենի ուշը այն կողմը դարձաւ, ձիաւորը ուղիղ ծառի տակը եկաւ եւ դեռ ձիուց չիջած բոլորը ոտքի կանգնեցին եւ օրհնեա՛ տէր, կոչեցին, Աստուած օրհնի. եղաւ ձիաւորի պատասխանը. երիտասարդներից մէկը իսկոյն բռնեց կապոյտ նժոյգի սանձը, ցած իջաւ մի միջին հասակի բարակ մարդ, որի դէմքից, փառաւոր մօրուքից երեւում էր որ նա քահանայ է. իսկ հասակը եւ իւր վերայ կրած զէնքերի բազմութիւնը կասկածել էր տալիս մարդուն։

(Կը շարունակուի)

նրան ընկերակցում է զինուորական Պատուխով, որ մի անգամ արդէն եղել է Արարատի վերայ։

—Կ. Պոլսում, սուլթանի հովանաւորութեան տակ, ինչպէս յայտնի է, մի յանձնաժողով է կազմուած երկրաշարժից մնասուածներին օգնելու համար։ Յանձնաժողովի նախագահ է Կ. Պոլսի քաղաքապետ Բէդվէն-փաշան, իսկ անդամներն են երկու պատգամաւորներ պետական խորհրդի կողմից, երկու հոգի ֆինանսների մինիստրութիւնից, մէկը արդարադատութեան մինիստրութիւնից, մէկը Կ. Պոլսի քաղաքապետութեան կողմից մէկը Օսմանեան բանկից, մէկ նեկայացուցիչ յոյն համայնքից, մէկ ներկայացուցիչ հայ համայնքից, մէկը՝ հրէական համայնքից։ Ընդամենը 12 անդամներ։ Մինչև օգոստոսի 4-ը այդ յանձնաժողովը հաւաքել է 1,992,676 պիաստր։ Զմիւռնիայում, մինչև յուլիսի 27-ը ըստորագրութեամբ հաւաքուել է մօտաւորապէս 110,000 պիաստր։ Փարիզում հաւաքուել է 205,750 ֆրանկ։ Աւստրիական կայսրը 10,000 ֆրանկ է նուիրել երկրաշարժից վնասուած անձանց համար, որոնք բնակւում են Կ. Պոլսում։ Գերմանական կայսրը 50000 մարկ է նուիրել նոյն նպատակով։

„Մշակ“

—„Հայրենիք“ լրագրից քաղում ենք հետեւեալը։ Իգաամ կիմանայ թէ հրէից բարոնալետի գայմագամ էֆէնտին կարգադրութեամբ Խագիւղի հրէից վարժարանին մէջ աւանդած դասերը թուրքերէն լեզուով պէտք է աւանդուին։

—„Նոր-Դար“ լրագրից քաղում ենք հետեւեալը։ Ս. Էջմիածնից հաղորդում են, որ Վեհափառ Կաթուղիկոսի կարգադրութեամբ այս տարի էլ ուսուցիչները մնում են նախկին դրութեան մէջ. status duo-ն չէ փոխուում և նախկին պայմաններով կարող են շարունակել ուսուցչական պաշտօնը։ Այս մասին պաշտօնական շրջաբերական է ուղարկուելու թեմական առաջնորդներին։ Եթէ մի որ և է փոփոխութիւն տեղի ունենալու է, այդ մասին ծանուցումն կը լինի։

—Նոյն լրագրից քաղում ենք հետեւեալը։ Աւղանստանի սահմանից մեր թղթակիցը գրում է մեզ.—Աւղանիստանը սկսել է զօրք վերցնել Մամանտալից և Հազարայից, այդ նպատակին հասնելու համար Մամանտ և Հազարա է եկած մէկ յանձնաժողով, որ արդէն սկսած է 15 տարեկանից մինչև 35 տարեկան մարդկանց զինագրել, Անգլիական երկաթուղու գիծը հասել է Քուրտուքտան։

—„Journal des Débats“-ն ասում է, որ ժապօնացիները պէտք է անողոք պատերազմի պատրաստուին։ Զինացիները գերի չեն առնում, այլ ուղղակի գլխատում են իրանց ձեռքն ընկած թշնամուն, որովհետև իւրաքանչիւր գլխի համար վարձատրութիւն են ստանում։ Ֆորմոզում, օրինակ, գրծը նրանք այն դրութեան հասցրին, որ փորում էին գերեզմանները և կտրում էին մեռելների գլուխները, որպէս զի վարձատրութիւն ստանան իրանց գեներալ Լիու-Մին-Զուանից, ոչ ներկայումս չինական զօրքի հրամանատարն է Կորէայում։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սալմաստ.—Լուսակ, մեզնից անկախ պատճառներով չենք կարող հրատարակել ձեր գրուածը։ Կուղարկենք ուր որ հարկն է ի հրատարակութեան։

Արտաբիլ.—Մարգարէ. կարդացէք վերևի պատասխանը։

***Մ.—Թշուառ մշեցի. երկրորդ մասը ստացանք, շարունակութիւնը ամբողջապէս ուղարկեցէք։

Թէհրան.—Յ. Բ. ձեր յօդուածը բաւականին լաւ էր, որովհետև այդ նիւթի վերայ բաւականին խօսուել է. նորա կրկնութիւնը անախորժ կը լինէր։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԻԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոյն...94 թուից Դավմէժում կազմուած է „Ընթերցասիրաց“ գրադարանական ընկերութիւն, որի նպատակն է ժողովրդական գրադարաններ բանալ Աւորպատականում։ Ընկերութիւնը սորանով դիմում է յարգելի հեղինակներին, հրատարակիչներին եւ նիւթատուներին, որ բարեհաճեն յօգուտ ընկերութեան դրուելիք նիւթական եւ այլ նուէրներն ուղարկել „Շաւիղի“ խմբագրութեան։

Դավրէժում մեր հասցէն է՝
„Ընթերցասիրաց“ գրադարանական ընկերութիւն. Société de la Bibliothèque „des Amis des lettres“ Tauris (Perse)

Փնտռում է իւր եղբօր կողմից մահտեսի Դաւիթ Պետրոս Աղէքսանդրեանը որ մի սրտնեղութեանից ստաճառով թողել հեռացել է իւր տնից Բաղդադից եւս անյայտացել։ Նա տեսնուել է Բասրայ, Բօմբէյ, Կալկաթայ եւ վերջում Թիրաչի, որ տեղից մեկնել է Պարսկաստան գալու համար։ Խնդրում է Պարսկաստանայ որ քաղաքում կամ այլուր ով պատահել կամ կը պատահէ նրան, հաղորդէ խմբագրութեանս

Զեռնոտու արժէքներով պատրաստեմ գնելու ՊԱՐՍԻՑ կամ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԻՆ, ՆՈՐ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐ։ Խնդրում է վաճառողներից ուղարկել իւրեանց ՆԱՄՈՇՆԵՐԸ վերջնական արժէքը յայտնելով։ Պատասխանները ընդունելի չեն։

Դիմել՝ Հրանտ Յ. Մարիմեան, Դավրէժ

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատունումը Լաէզար փողոցում Թէհրանում. տասնիրումատաչափ եւ աւելի գնողի համար, սովորական արժէքից զիջում կը լինի։ Գիշեր ժամուակում եւս դեղատունը բաց է։